



## ԱՎԵՏ ԱՍԱՏՈՒՐ

Երբ արդեն ապրել ես երեսուն տարի ու գիտես թե այդ տարիքին ինչպիսի երազներ ու ինչքան անելիքների վճիռներ են կուտակվում մարդու մեջ, անհնար է պատկերացնել, որ մենք այդ տարիքից կարելի է այլևս չլինել:

1972-ին, երեսուն տարեկան հասակում, Ավետ Ասատուրը հրաժեշտ տվեց կյանքին: Իրեն ճանաչողների վրա նա թողել էր ինքնամոխի, լուսկյաց, վերին աստիճանի համեստ, իսկ անհրաժեշտության դեպքում նվիրվող, ուժերի ներած սահմանում օգնելու պատրաստ երիտասարդի տպավորություն:

Միակ բանը, որ անցնող ժամանակի հետ գալիս է փոքր-ինչ փարատելու ցավը այն է, որ պահպանվել են Ավետի ապրումներն ու երազները՝ հաղորդված կտավին ու թղթին, անկեղծ ու ինքնաբերական նկարներ, որոնք ահա հարազատների ու ընկերների ջանքերով ի մի են հավաքել և ներկայացվել նրա հետմահու ցուցահանդեսում:

Գիտում ես Գեղարվեստական ինստիտուտի շրջանավարտ (1967), ստեղծագործական կյանք մտած երիտասարդ նկարչի առաջին գործերը՝ շուրջ 40 կտավ և 100-ից ավելի գծանկար, ու համոզվում, որ վաղամտիկ նկարիչն ուներ իր սեփական աշխարհը ու ապրում էր այդ աշխարհով:

Ավետը սիրել, փայփայել է կյանքը, արևը: Յուզահանդեսի այցելուները կարող են տեսնել արևին նվիրված նրա մի շարք կտավները ու համոզվել, թե ինչպիսի սիրով է երիտասարդ նկարիչը ձևեր որոնել արտահայտելու համար կյանքի հանդեպ իր ունեցած սերը, որպիսի համառությամբ է նա ձգտել ճանաչել, քաջահայտել մարդու բարդ ներաշխարհը:



Ուսանող— 1966 թ. (յուղաներկ)

Студент—1966 г. (масло)

Տասնյակ հետաքրքիր գծանկարներ, գեղանկարչական խոսուն երփնագրով կատարված կտավներ կան ցուցահանդեսում բնանկարներ, որոնց մեջ դրսևորում է գտել նկարչի ներշնչանքը՝ քաղած հայրենի բնաշխարհից, հայրենի ճարտարվեստից: Կա նաև «Երագող տղան» անվանումը կրող կառուցվածքային համարձակ ու ինքնատիպ լուծում ստացած մի գործ...

Արվեստի ճանապարհը Ավետ Ասատուրը սկսել էր վստահ ու ինքնուրույն քայլերով: Այդ «սկիզբն» էլ բավական է ճանաչելու նկարչի զգայուն հոգին ու վերապրելու գեղեցիկ հույզեր:

ՇԱՀԵՆ ԽԱԶԱՏՐՅԱՆ

## АВЕТ АСАТУР

Когда сам уже прожил тридцать лет и знаешь какие мечты и решения каких задач могут быть выкристаллизованы в этом возрасте в человеке невозможно представить, что именно с этих пор можно перестать существовать.

В 1972 году, в возрасте тридцати лет, Авет Асатур (Аветик Асатрян) простился с жизнью. Знаяшие помнят его молчаливым, замкнутым в себе, в высшей степени скромным, а при необходимости готовым всегда прийти на помощь, преданным молодым человеком.

Конечно, время несколько притупляет боль, но у нас сохранились переживания и мечты Авета, переданные полотну и бумаге, искренние и своеобразные картины, которые благодаря усилиям родных и друзей собраны и представлены на его посмертной выставке.

Смотришь на первые работы, только вступившего в творческую жизнь выпускника (1967) художественного института: около 40 полотен и более 80 рисунков—и убеждаешься, что художник имел свой собственный мир и жил в нем.

Авет любил и наслаждался жизнью, природой. Посетители выставки смогут увидеть посвященные солнцу целый ряд полотен и убедиться с какой любовью молодой художник искал формы выражения своей любви к жизни, с каким упорством он стремился познать и выразить сложный внутренний мир человека.

Десятки интересных рисунков, живописно исполненных полотен можно увидеть на выставке: пейзажи, в которых выразилось вдохновение художника, порожденное родной природой, родным зодчеством. Например, композиционное полотно «Мечтающий мальчик», решено смело и своеобразно...

К искусству Авет Асатур шел уверенными самостоятельными шагами. Этого «начала» вполне достаточно для познания чувствительной тонкой натуры художника и переживания приятных волнений.

ШАГЕН ХАЧАТРЯН



Գուրգ — 1963 թ. (լուսանկար)

Моя сестра — 1963 г. (масло)

Երևի այն մարդն է հետաքրքիր, մանավանդ արվեստագետ, եթե ասելիք ունի:

Ավիկը գրաֆիկայի մեջ իրեն ավելի ազատ էր զգում, քան գունանկարչության մեջ: Գեղանկարչական կտավի համեմատ նրա գծանկարը ամուր է և թեթև միաժամանակ: Նաև հեշտ ենթարկվող նկարչի կամքին: Բայց երկու դեպքում էլ նրան զբաղեցնողը այնքան նկարի կատարելությունը չի եղել, որքան իրեն հուզող միտքն արտահայտելու ցանկությունը, որ երբեմն հասնում էր բուռն, մուլմիսկ հետապնդող չափերի:

Արևը և մարդը. համարյա չկա նկար, որտեղ այս հարցը արծարծված չլինի:

Ոչ թե այն մարդը, որ արևի զարնանային ճառագայթների տակ տաքացնում է իր ոսկորները, այլ նա, որ ամռան կիզիչ արևն է կրում իր մեջ: Ուրեմն՝ ոչ թե գոյություն սովորական, այլ մտքերով, բախումներով, սերերով ու կարոտներով լի կյանք:

Մեկը ուշ է հասնում իր ասելիքին, մի ուրիշը՝ շուտ: Ավիկի կյանքը կարճատև եղավ, բայց արևաբաղձ այդ նկարիչը, իր մտքերից թանկագինը՝ «Միշտ արևի հետ» ձգտեց և հաղորդեց թղթին և կտավին:

ՌՈՒԲԵՆ ԶԱՐՅԱՆ

Երազող տղան— 1965 (յուղաներկ)  
Мечтающий мальчик—1965 г. (масло)





Երիտասարդ կոմպոզիտորի դիմանկար— 1972 թ. (մատիտ, թուղթ)  
Портрет молодого композитора—1972 г. (карандаш, бумага)

Լուսկյաց, ինքնամփոփ, երազկոտ Ավիկը ուներ իր ուրույն, ինքնատիպ աշխարհը, լի երազներով, իղձերով, թռիչքով:

Իր վառ ցայտուն մտապատկերները հասած խորհրդապաշտության աստիճանի, միշտ էլ եղել են ազդու և տպավորիչ, որովհետև նա աշխատել է ոչ միայն պատկերել այլ նաև արտահայտել:

Գեպի արևը վազող աղջիկները, ծխացող լեռները, վկայություններն են այն տպավորիչ արվեստի, որին չի կարելի անտարբեր նայել: Նրա յուրաքանչյուր նկարը մեզ զգացնել է տալիս այս վաղամեծիկ տաղանդավոր արվեստագետի սրտի ամեն մի տրոփյունը:

ԱՐԱ ԲԵՔԱՐՅԱՆ

Հայկական ՍՍՀ ժողովրդական նկարիչ



**Բնանկար**— (Հրազդանի գյուղ)— 1963 թ. յուղաներկ)

**Пейзаж (село Раздан)**—1963 г. (масло)

Ծաղիկի վրա

**Ինքնադիմանկար**— 1964 (յուղաներկ)

На обложке

**Автопортрет**—1964 г.

Издание Дома художника Армении

Ереван—1973 г.

Цена 15 коп.